



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆ



09 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000069

Ձեռնարկողը՝

«ԴՐՈՒՋՅԱ» ՍՊԸ
ք. Տաշիր, Գետափնյա 15

Գործունեությունը՝

Նովոսելցովո-1 փորֆի երևակման տեղամասերում
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000069

<03> 09 2020թ.

**Լոռու մարզի Նովոսելցովո-1 տորֆի երևակման տեղամասերում
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «ԴՐՈՒԶՅԱ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ, Ծրագիր
Գործունեության կատեգորիան՝ «Գ»
Տեղադրման վայրը՝ Լոռու մարզ, Տաշիր համայնք

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 2)-րդ կետի ա. ենթակետի՝ Նովոսելցովո-1 տորֆի երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրությունը դասակարգվում է «գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս

Լոռու մարզի Նովոսելցովո-1 երևակման տարածքում «ԴՐՈՒԶՅԱ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է իրականացնել տորֆի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Տորֆերի երևակումը գտնվում է Տաշիրի տարածաշրջանում՝ Նովոսելցովո և Սարատովկա գյուղերի միջև, Սարատովկա գյուղի վարչական տարածքում՝ 1490-1495մ բացարձակ բարձրությունների վրա:

Թիվ 1 ճահիճը տեղակայված է Սարատովկա գյուղից 2.8կմ դեպի արևմուտք, Նովոսելցովո գյուղից 2.0կմ դեպի հյուսիս, իսկ թիվ 2 ճահիճը՝ Սարատովկա գյուղից 2.7կմ դեպի հյուսիս-արևմուտք, Նովասելցովո գյուղից 2.5կմ դեպի հյուսիս: Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ խոտհարք: Երևակման տարածքից 950մ հեռավորության վրա անցնում է Նովոսելցովո-Սարատովկա ասֆալտապատ ճանապարհը, իսկ արևմտյան կողմից անցնում է գրունտային ճանապարհ, որն օգտագործվում է գյուղի բնակիչների կողմից գյուղատնտեսական աշխատանքների համար, կարող է օգտագործվել նաև երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար:

Նովոսելցովո-1 տեղամասն իրենից ներկայացնում է տափարակ, /տեղամաս 5-6մ բարձրության թմբերով և բլրակներով/ համարյա չմասնատված հարթավայր, որտեղ տարածված են տորֆային առաջացումները: Հայցվող տարածքում մակերևութային ջրերի



հոսքերը բացակայում են, ամենամոտ աղբյուրների <<Նովոսելցովոյի>> խումբը գտնվում է երևակյան տարածքից 2կմ հեռավորության վրա՝ Ձորագետի կիրճում:

Ծագումնաբանական տեսակետից, ուսումնասիրվող տորֆերն առաջացել են նախկին ոչ մեծ լճերի տեղերում: Նախնական դիտարկումներով տորֆերի կուտակումներն ունեն համանման երկրաբանական կառուցվածք և վերնից ներքև ներկայացված են հետևյալ շերտերով՝ բուսական մնացորդների կուտակումներ՝ 0.1-0.2մ, երբեմն՝ 0.4մ, տորֆ-0.2-3.9մ, մոխրագույն խիտ, մածուծիկ կավեր՝ 0.2-0.4մ (հիմնատակող ապարներ) և բազալտային հատակ:

Սարատովկայի և Նովոսելցովոյի խմբերի տորֆաճահիճները տորֆերի երևակյանների հետ միասին նախնական հետախուզվել են 1979թ-ին, աշխատանքների նպատակն է եղել՝ պարարտանյութի համար պիտանի տորֆերի պաշարների գնահատումը և հաշվարկը՝ C1 կարգով: Սակայն այդ պաշարները ՊՏՀ-ի կողմից չեն հաստատվել: Ընկերության կողմից Նովոսելցովո-1 տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականցեն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ընկերությանը ուսումնասիրության թույլտվությամբ ամրագրված՝ 19.3 հա ընդհանուր մակերեսով տարածքում, որը ARM WGS-84 կոորդինատային համակարգով եզրագծվում է հետևյալ կոորդինատներով.

Տորֆաճահիճ թիվ 1

1. Y =8439326	X =4549414	13. Y =8439408	X = 4549724
2. Y =8439287	X =4549458	14. Y =8439424	X =4549719
3. Y =8439287	X =4549538	15. Y =8439445	X =4549721
4. Y =8439283	X =4549555	16. Y =8439466	X =4549728
5. Y =8439276	X =4549569	17. Y =8439491	X =4549741
6. Y =8439173	X =4549663	18. Y =8439512	X =4549735
7. Y =8439158	X =4549734	19. Y =8439596	X =4549590
8. Y =8439182	X =4549795	20. Y =8439589	X =4549429
9. Y =8439216	X =4549809	21. Y =8439573	X =4549375
10. Y =8439275	X =4549804	22. Y =8439452	X =4549373
11. Y =8439312	X =4549798	23. Y =8439369	X =4549385
12. Y =8439352	X =4549774		

Տորֆաճահիճ թիվ 2

1. Y =8439186	X =4548925	8. Y =8439470	X =4549172
2. Y =8439136	X =4548962	9. Y =8439513	X =4549136
3. Y =8439119	X =4549005	10. Y =8439518	X =4549105
4. Y =8439129	X =4549049	11. Y =8439487	X =4549066
5. Y =8439174	X = 4549103	12. Y =8439336	X =4548967
6. Y =8439238	X = 4549149	13. Y =8439186	X =4548925
7. Y =8439334	X =4549187		

Հետախուզական փորվածքների տեղադիրքը և հեռավորություններն ընտրվել են օգտակար հանածոյի պաշարները ուսումնասիրելու համար, եզրագծել և գնահատել արդյունաբերական կարգով: Հետախուզվող երկու տեղամասերում հետախուզական ցանցը ընտրվել է՝ 50×50մ, հետախուզական գծերը տեղադրվել են տորֆերի կուտակների երկար առանցքներին ուղղահայաց՝ միմյանցից 50մ հեռավորության վրա: Յուրաքանչյուր երրորդ հետախուզագծում, միմյանցից 100մ հեռավորության վրա կփորվեն հետախուզահորեր, որոնք կդասավորվեն շախմատաձև: Հետախուզական փորվածքների միջև նման հեռավորության միջոցով հնարավոր կլինի հետախուզվող տեղամասերում տորֆերի կուտակումները եզրագծել և գնահատել արդյունաբերական B կարգով: Ինչպես հետախուզահորերի անցումը, այնպես էլ շնեկային զոնդավորումը կիրականացվեն ձեռքով: Բոլոր փորվածքներն անցնելու են մինչև կավերը հիմնատակող բազալտները:



Հետախուզահորերի անցումը կիրականացվի՝ 1.0x1.5մ և 1.5մ² կտրվածքով: Երկու տեղամասերում կփորվեն 43 հետախուզահորեր /258մ³ ծավալով/, որոնց խորությունները տատանվում են 3.5-4.5մ սահմաններում՝ ընդհանուր 175 գծ.մ/: Տորֆերի հաստվածքների հզորությունների ճշգրտման նպատակով 43 կետերում կկատարվեն տորֆի շերտի շնեկային զոնդավորում:

Տորֆերի ֆիզիկական հատկությունների և քիմիական կազմի պարզաբանման նպատակով, բոլոր հետախուզահորերից կնմուշարկվեն տորֆերի ակոսային նմուշներ՝ տորֆի հաստվածքի ամբողջ հզորությամբ: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ուսումնասիրվող երկու տեղամասերում կկատարվի նաև 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ՝ մոտ 19.3 հա ընդհանուր մակերեսով տարածքի վրա /որից՝ 1-ին տորֆաճահիճ-12.7հա, 2-րդ տորֆաճահիճ-6.6հա/: Կկատարվի նաև 300խմ ընդհանուր ծավալով փորձնական հանույթ: Նշված տոպոհիմքի հիման վրա կկազմվի հանքավայրի տորֆակուտակների նույն մասշտաբի երկրաբանական քարտեզները: Վերոնշյալ աշխատանքների ծավալը կապահովի ստանալ բավարար և հավաստի տվյալներ հանքավայրի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոյի որակի մասին, ինչպես նաև դրա հիդրոերկրաբանական, լեռնաերկրաբանական ու լեռնատեխնիկական պայմանների վերաբերյալ: Բոլոր նմուշների լաբորատոր փորձաքննությունները կկատարվեն «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի լաբորատորիայում:

Տորֆերը, որպես պարարտանյութ կիրառելու հիմնական չափանիշներն են.

1. Քայքայվածության աստիճանը- ավելին քան 15%,
2. Մոխրայնությունը- մինչև 35%,
3. Ծծումբի պարունակությունը- ոչ ավելին քան 1%,
4. Կալցիումի ավելի քան 5% և ֆոսֆորի ավելի քան 2% պարունակության դեպքում

տորֆի մոխրայնությունը չի սահմանափակվում:

Երկրաբանական աշխատանքների իրականացման համար նոր ճանապարհների կառուցում կամ նորոգում չի նախատեսվում, քանի որ երկու տեղամասեր տանող ճանապարհները բարենպաստ են: Հողի ձևավորված շերտ երևակման տարածքում բացակայում է, տորֆային կուտակների մակերեսը ծածկված է բուսական մնացորդների կուտակումներով, հիմնականում 0.1-0.2մ հզորությամբ, հազվադեպ՝ մինչև 0.4մ խտտերի արմատների և մամուռների հողախառն շերտով: Քանի որ հողի շերտ չի խախտվելու, ուսումնասիրության աշխատանքների ընթացքում դրա պահեստավորման անհրաժեշտություն չկա: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներից հետո նախատեսվում է փորվածքների և կտրվածքների հարթեցում, մակերեսի մաքրում և խախտված տորֆակուտակների ռեկուլտիվացում:

Աշխատանքների իրականացման համար պահանջվող տեխնիկական ջուրը /որը նախատեսված է հորատման աշխատանքների և մակերևութային փորվածքների և զոնդավորման անցման ժամանակ փոշեգոյացման կանխման համար/ կբերվի Նովոսելցովո գյուղից՝ ջրի ցիստեռնով, իսկ անձնակազմի կարիքների համար խմելու ջուրը կբերվի հատուկ տարողություններով: Աշխատողների կենցաղային կեղտաջրերի հեռացման համար կնախատեսվեն լուծումներ:

Երկրաբանական ուսումնասիրության ժամանակ ընդերքօգտագործման թափոնների գոյացում չի նախատեսվում, քանի որ մակաբացման ապարներ տորֆակուտակի մակերեսին չկա, իսկ աշխատանքների տեխնոլոգիան վտանգավոր թափոնների գոյացում չի ենթադրում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ հորատումը կատարվելու է կարծր համաձուլվածքային թագիկներով՝ առանց հորատման ուժի կիրառման:



Փորձնական հանույթի անցման աշխատանքների տեխնոլոգիական ցիկլում օգտագործող նավթամթերքները և քսայուղերի մնացորդները կպահվեն հատուկ հատկացված տեղում և նշված թափոնների կառավարման միջոցառումները կիրականացվեն մասնագիտացված ընկերության կողմից՝ ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո:

Մակերևութային հետախուզական փորվածքների անցման արդյունքում խախտվելու է տորֆի կուտակումների մակերեսը, որը ներկայացված է՝ խոտաբույսերի և մամուռների խառնուրդով հողախառն զանգվածով: Հետախուզական փորվածքների անցումից և նմուշառումից հետո խախտված տարածքները համահարթեցվելու են, այնուհետև փոփոխվում է բուսահողային զանգվածը և բույսերի վերածը խթանելու նպատակով կատարվում է փխրեցում: Տարածքների վերականգնման համար օգտագործվելու է 30 խմ ծավալով տորֆակուտակը: Նշված աշխատանքները կատարվում են ձեռքով: Ուսումնասիրության աշխատանքների հետևանքով խախտված տարածքների վերականգնման/ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացման ծախսերը գնահատվել է 90.000 ՀՀ դրամ: Նշված աշխատանքներով կկանխարգելվեն բուսական աշխարհի վրա հնարավոր աղդեցությունները և տարածքները կվերականգնվեն իրենց նախկին կարգավիճակի:

Նովոսելցովո-1 տորֆի երևակման տարածքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք, տարածքում հաշվառված չեն բնության հուշարձաններ, չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ: Պահպանության ենթակա տեսակները դիտարկվող տարածքից գտնվում են նվազագույնը 2կմ հեռավորության վրա:

Նովոսելցովո-1 տորֆի երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում Ընկերության կողմից իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և աշխատանքային վիճակի մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /մթնոլորտային օդ, լեռնատրանսպորտային սարքավորումներ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/: Մշտադիտարկումների համար նախատեսված ծախսերը տարեկան կկազմեն 200.0 հազ.դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների մեղմացման /կանխարգելման նպատակով նախատեսված միջոցառումները, ներառյալ այն միջոցառումները, որոնք ուղղված են ուսումնասիրության աշխատանքների ընթացքում երևակման տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելմանը և աշխատանքային միջավայրի անվտանգության ապահովմանը, ամփոփվել են բնապահպանական կառավարմաման պլանում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, առողջապահության նախարարությունը և Լոռու մարզպետարանը, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել: Լոռու մարզպետարանի կողմից ստացված կարծիքում առաջադրվել էր հարց, որը վերաբերում էր հանքավայրում արդյունահանման աշխատանքներ իրականացնելու դեպքում Նովոսելցովոյի խմելու ջրի հանքավայրի վրա հնարավոր ազդեցությանը (աղբյուրների ջրադինամիկական ռեժիմի ցուցանիշներ՝ ծախս, ջերմաստիճան, քիմիական կազմ, հանքայնացում և այլն): Ընկերության կողմից ներկայացված 13.08.2020թ-ի թիվ 05 գրության համաձայն, բարձրացված հարցի վերաբերյալ Լոռու մարզպետարանում իրականացվել է քննարկում և որոշվել է հարցին



Պր. Արտուրյան

Պր. Փ. Բաղդասարյան



Պր. Լ. Վահանյան

Տնօրեն Գրասենյակի

Հարգանքներով

Ձեր ներկայացրած պատճենները համապատասխանում են նախատեսված պահանջներին և համապատասխանում են ընդունված կարգապահությանը և չեն պահանջում ավելի ուրիշ փոփոխություններ կատարել: Ձեր ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են նախատեսված պահանջներին և համապատասխանում են ընդունված կարգապահությանը և չեն պահանջում ավելի ուրիշ փոփոխություններ կատարել:

ՆԱԿԱԵՓԱՏՈՒՄ

Մենք հարգում ենք Ձեր ներկայացրած փաստաթղթերը և համապատասխանում են նախատեսված պահանջներին և համապատասխանում են ընդունված կարգապահությանը և չեն պահանջում ավելի ուրիշ փոփոխություններ կատարել:

Ձեր ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են նախատեսված պահանջներին և համապատասխանում են ընդունված կարգապահությանը և չեն պահանջում ավելի ուրիշ փոփոխություններ կատարել:

Ձեր ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են նախատեսված պահանջներին և համապատասխանում են ընդունված կարգապահությանը և չեն պահանջում ավելի ուրիշ փոփոխություններ կատարել:

ԱՎԱՅՈՒՄՆԵՐ

Ձեր ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են նախատեսված պահանջներին և համապատասխանում են ընդունված կարգապահությանը և չեն պահանջում ավելի ուրիշ փոփոխություններ կատարել:

Ձեր ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են նախատեսված պահանջներին և համապատասխանում են ընդունված կարգապահությանը և չեն պահանջում ավելի ուրիշ փոփոխություններ կատարել:

Հարգանքներով

Ձեր ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են նախատեսված պահանջներին և համապատասխանում են ընդունված կարգապահությանը և չեն պահանջում ավելի ուրիշ փոփոխություններ կատարել: